«Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն 5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները 5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիր 6
4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ 9
5. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ 10
6. Ներդրումներ պետական արժեթղթերում 11
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 11
8. Հատուցումների գծով ծախսեր և պարտավորություններ 11
9. Եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից 12
10. Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր 12
11. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ և գործառնական ռիսկեր 12
12. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 13
13. Ֆինանսական ռիսկերի կառավարում 13
14. Ֆինանսական գործիքների իրական արժեք 16
15. Կապակցված կողմերի բացահայտումներ 17

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Զինծառայողների ապահովագրության»
Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Հոգաբարձուների Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք Հոգաբարձուների խորհրդին հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

30 ապրիլի, 2021թ.

ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Քսենիա Բագինյան

Գլխավոր տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան

«ԷՐՆՍԹ ԵՎ ՅԱՆԳ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARABKIR CLOSED JOINT-STOCK COMPANY
«ERNST & YOUNG»
00057741

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	5	30,914,275	19,343,407
Ներդրումներ պետական արժեթղթերում	6	3,392,773	3,602,686
Ընդամենը ակտիվներ		**34,307,048**	**22,946,093**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	8	23,694,770	5,325,278
		23,694,770	**5,325,278**
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	8	3,309,737	699,462
		3,309,737	**699,462**
Ընդամենը պարտավորություններ		**27,004,507**	**6,024,740**
Զուտ ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի գծով վերագնահատման պահուստ		67,349	148,472
Չբաշխված շահույթ		7,235,192	16,772,881
Ընդամենը զուտ ակտիվներ		**7,302,541**	**16,921,353**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**34,307,048**	**22,946,093**

Ստորագրվել և հավանության են արժանացել Հիմնադրամի Տնօրենի պաշտոնակատարի կողմից:

Տնօրեն՝ Կարուժան Ավետիքյան

Գլխավոր հաշվապահ՝ Լուսինե Զուրաբյան

30 ապրիլի, 2021թ.

1-15 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2020թ.*	*2019թ.*
Եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	17,110,134	8,585,400
Տոկոսային եկամուտ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից		2,150,806	1,315,723
Տոկոսային եկամուտ պետական արժեթղթերում ներդրումներից		273,327	278,965
Այլ եկամուտներ		650	–
Ընդամենը եկամուտ		**19,534,917**	**10,180,088**
Հատուցումների գծով ծախսեր	8	(29,009,692)	(3,389,106)
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր	10	(62,898)	(58,330)
Այլ ծախսեր		(16)	(86)
Ընդամենը ծախսեր		**(29,072,606)**	**(3,447,522)**
Հաշվետու տարվա (վնաս)/շահույթ		**(9,537,689)**	**6,732,566**
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ			
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից զուտ (վնաս)/օգուտ		(91,086)	132,589
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ	10	9,963	(7,378)
Ընդամենը հաշվետու տարվա այլ համապարփակ (վնաս)/եկամուտ		**(81,123)**	**125,211**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ (վնաս)/ եկամուտ		**(9,618,812)**	**6,857,777**

1-15 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Չբաշխված շահույթ	*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ*	*Ընդամենը զուտ ակտիվներ*
Զուտ ակտիվներ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**10,040,315**	**23,261**	**10,063,576**
Հաշվետու տարվա շահույթ	6,732,566	–	**6,732,566**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ	–	125,211	**125,211**
Զուտ ակտիվներ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,772,881**	**148,472**	**16,921,353**
Հաշվետու տարվա վնաս	(9,537,689)	–	**(9,537,689)**
Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս	–	(81,123)	**(81,123)**
Զուտ ակտիվներ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,235,192**	**67,349**	**7,302,541**

1-15 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2020թ.*	*2019թ.*
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	9	17,110,134	8,585,400
Տրված հատուցումներ		(8,029,925)	(822,091)
Այլ եկամուտներ		650	–
Այլ ծախսեր		(16)	(86)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից		**9,080,843**	**7,763,223**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ		(14,345,914)	(12,637,778)
Ներդրումներ պետական արժեթղթերում		(198,346)	–
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների մարում		12,447,777	4,147,679
Մուտքեր պետական արժեթղթերում կատարված ներդրումների մարումից		300,000	120,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ		1,886,367	311,375
Պետական արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ		290,500	295,501
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված / (օգտագործված ներդրումային գործունեությունում)		**380,384**	**(7,763,223)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**9,461,227**	**–**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	7	–	–
Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,157)	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	7	**9,460,070**	**–**

(հազար ՀՀ դրամ)

1. Գործունեության նկարագրություն

«Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») հիմնադրվել է 2017թ. հունվարի 13-ին՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն:

Հիմնադրամը ստեղծվել է՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած մարտիկների ու նրանց ընտանիքների սոցիալական բարօրության, կայուն և հավասար ապահովագրական հատուցումներ տրամադրելու նպատակով:

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Հիմնադրամը ֆինանսավորվում է Հայաստանում աշխատող յուրաքանչյուր անձի կողմից փոխանցվող ամսական պարտադիր վճարներից (կախված եկամտի չափից) և այլ բարերարների կողմից ստացված նվիրաբերություններից:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

Հոգաբարձուների Խորհուրդը բաղկացած է 7 անդամից: Խորհրդի անդամները, ինչպես նաև Հիմնադրամի մյուս աշխատակիցները Հիմնադրամի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

Հիմնադրամի հիմնական նպատակները հետևյալն են՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության, կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը և այդ նպատակի ապահովման համար օրենքով սահմանված գործառնությունների իրականացումը:
- Խրախուսել յուրաքանչյուրին՝ սատար կանգնել հայկական բանակի զինվորներին՝ նվիրատվություն կատարելով վերջիններիս կյանքի ապահովագրության համար:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն («ՖՀՄՍ»):

Հիմնադրամը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

Տնտեսական միջավայրը և COVID-19 համավարակի ազդեցությունը

Հիմնադրամը իր գործունեությունը ծավալել է ցածր տնտեսական ակտիվության միջավայրում՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրության և կորոնավիրուսի համավարակի բռնկման և հետագա տարածման պատճառով առաջացած բացասական ազդեցությամբ և բարձր անորոշությամբ: Տարին առանձնահատուկ էր Հիմնադրամի համար: Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմը հանգեցրեց զոհերի աննախադեպ աճի և համապատասխանաբար Հիմնադրամի՝ հատուցումների գծով պարտավորությունների աճի:

2020 թվականին COVID-19 համավարակի արագ տարածման կապակցությամբ բազմաթիվ կառավարություններ, այդ թվում՝ Հայաստանի կառավարությունը, վարակի բռնկման դեմ պայքարի տարբեր միջոցներ են ձեռնարկել՝ ներառյալ ուղևորությունների սահմանափակումներ, կարանտինի կիրառում, գործարար և այլ օբյեկտների փակում և որոշ շրջանների արգելափակում: Այդ միջոցներն ազդել են գլոբալ մատակարարման շղթաների, ապրանքների և ծառայությունների պահանջարկի, ինչպես նաև գործարար ակտիվության մասշտաբների վրա: Ակնկալվում է, որ համավարակը, ինչպես նաև դրա հետ կապված միջոցառումները հանրային առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտում կարող են ազդել լայն շրջանակի ոլորտներում գործող սուբյեկտների գործունեության վրա:

Հիմնադրամը շարունակում է գնահատել համավարակի և տնտեսական պայմանների փոփոխության ազդեցությունը իր գործունեության, ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիր

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, կարճաժամկետ ավանդները, որոնց մարման ժամկետը դրանց ծագման օրվանից սկսած մինչև 90 օր է, և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են առևտրի ամսաթվով, այսինքն այն ամսաթվով, որով պարտավորվում է գնել ակտիվը: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցները և ՀՀ պետական արժեթղթերում կատարված ներդրումները, որոնք հանդիսանում են իր գործունեության անմիջական արդյունքը:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով:

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է,
- Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև,
- Հիմնադրամը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Հիմնադրամի շարունակվող մասնակցության չափով: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Հիմնադրամից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ պարտքային գործիքները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Դասակարգումը հիմնված է հետևյալ երկու չափանիշների վրա. Հիմնադրամի ակտիվների կառավարման բիզնես մոդելի և արդյոք գործիքների գծով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բավարարում են *«բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման»* չափանիշին: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Հիմնադրամից ճանաչել պահուստ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվների համար:

Հիմնադրամը բանկերում բացված հաշիվների և ավանդների համար պահուստի գումարը հաշվարկում է՝ ելնելով գործընկեր բանկի երկարաժամկետ վարկային ռեյտինգից:

Իրական արժեքի չափում

Հիմնադրամն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները չափում է իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում,
- կամ հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, և չեն դասակարգվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հիմնադրամի հիմնական ֆինանսական պարտավորությունները բաղկացած են փոխհատուցումների գծով պարտավորություններից:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Եկամուտներ

Պարտադիր վճարներից և նվիրաբերություններից ստացված եկամուտները հասանելի են Հիմնադրամի գործունեության ֆինանսավորման համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Այդ իսկ պատճառով, պարտադիր վճարները և նվիրաբերությունները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են հասանելի:

Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրների միջև ո՛չ սովորական գործունեության ընթացքում, և ոչ էլ լուծարման ժամանակ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի և սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքի տարբերությունը:

Տոկոսային եկամուտ

Եկամուտները ճանաչվում են այն ժամանակ, երբ տոկոսները հաշվեգրվում են (օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, որն այն տոկոսադրույքն է, որը ակնկալվող ապագա դրամական մուտքերը զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի ակնկալվող օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը):

Ծախսեր

Վճարները, միջնորդավճարները և այլ ծախսերը սովորաբար ճանաչվում են հաշվեգրման եղանակով, երբ ծառայությունը համարվում է մատուցված:

Հատուցումների գծով ծախսեր

Հատուցումների գծով ծախսը ճանաչվում է հատուցման վերաբերյալ ՀՀ Պաշտպանության Նախարարության որոշումը ստանալու պահին՝ հատուցման ենթակա վճարվելիք գումարների ներկա արժեքի չափով, որը հավասար է հատուցման գծով պարտավորության իրական արժեքին: Հատուցման գծով պարտավորությունը սկզբնական ճանաչումից հետո չափվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով սկզբնական ճանաչման ժամանակ կիրառված զեղչման տոկոսադրույքը: Պարտավորության՝ ամորտիզացված արժեքով վերաչափման տարբերությունը ներառվում է հատուցման գծով ծախսերի մեջ՝ որպես ֆինանսական բաղադրիչ:

Արտարժութային գործառնություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Հիմնադրամի գործառնական և ներկայացման արժույթն է: Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են գործարքի կատարման ամսաթվի դրությամբ առկա գործառնական արժույթի փոխարժեքով: Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործառնական արժույթի փոխանակման փոխարժեքով: Արտարժությով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտարժութային գործառնություններ (շարունակություն)

Արտարժույթով գործարքների պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքի տարբերությունները արտացոլվում են արտարժութային գործառնություններից առաջացած օգուտ/վնասում:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 522.59 ՀՀ դրամ (2019թ.՝ 479.70 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 641.11 ՀՀ դրամ (2019թ.՝ 537.26 ՀՀ դրամ), իսկ 1 ռուբլու համար՝ 7.02 ՀՀ դրամ (2019թ.՝ 7.77 ՀՀ դրամ):

Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում

Հիմնադրամն առաջին անգամ է կիրառել ստանդարտների որոշ փոփոխությունները, որոնք գործում են 2020թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Հիմնադրամը վաղաժամկետ չի կիրառել որևէ հրապարակված, սակայն դեռևս կիրառության մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ: Յուրաքանչյուր փոփոխության բնույթը և ազդեցությունը ներկայացված է ստորև.

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում՝ «էականության» սահմանում

Փոփոխությունները ապահովում են էականության նոր սահմանում, որը նշում է, որ «Տեղեկատվությունը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ դրա բացթողումը, սխալ ներկայացումը կամ խեղաթյուրումը կարող է ազդել հիմնական օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության մասին ֆինանսական տեղեկատվություն տրամադրող ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա»:

Փոփոխությունները պարզաբանում են, որ էականությունը կախված կլինի ֆինանսական հաշվետվությունների համատեքստում տեղեկատվության էությունից կամ ծավալից՝ առանձին վերցրած, կամ այլ տեղեկատվության հետ համատեղ: Տեղեկատվության սխալ ներկայացումը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ այն կարող է ազդել հիմնական օգտագործողների որոշումների վրա: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա, և որևէ ապագա ազդեցություն Հիմնադրամի համար չի ակնկալվում:

Փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ»-ում՝ թողարկված 2018թ. մարտի 29-ին

Հայեցակարգային հիմունքները ստանդարտ չէ, և դրանում ներառված ոչ մի հիմունք չի կարող գերակայել որևէ ստանդարտում ներառված հասկացությունների կամ պահանջների նկատմամբ: Հայեցակարգային հիմունքների նպատակն է ստանդարտների մշակման գործում աջակցել ՀՀՄՍԽ-ին, օգնել պատրաստողներին՝ մշակելու հաշվապահական հաշվառման հետևողական քաղաքականություններ, երբ առկա չեն կիրառելի ստանդարտներ, և աջակցել բոլոր կողմերին հասկանալու և մեկնաբանելու ստանդարտները:

Վերանայված Հայեցակարգային հիմունքները ներառում են նոր հասկացություններ, ակտիվների և պարտավորությունների թարմացված սահմանումներ ու ճանաչման չափանիշներ, և պարզաբանում է որոշ կարևոր հասկացություններ:

Քանի որ Հիմնադրամի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է վերոնշյալ փոփոխություններին, դրանք որևէ ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հրապարակված, բայց ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Հիմնադրամը մտադիր է կիրառել այդ նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, եթե կիրառելի են, ուժի մեջ մտնելուց հետո:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում (շարունակություն)

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեսթում ներառվող վճարներ

Որպես 2018-2020թթ. ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանք, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունը այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Հիմնադրամը կկիրառի փոփոխությունները այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ձևափոխված կամ փոխանակված են կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, և չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Հիմնադրամի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է գնահատումներ և դատողություններ՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալների որոշման համար: Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են՝

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական հոսքերի արժեքի և ժամկետայնության ու գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկումից կորուստները և պարտքային ռիսկի զգալի աճը որոշելիս: Այս գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Հիմնադրամի ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների դատողություններ և գնահատումներ պարունակող տարրերը հետևյալն են.

- Հիմնադրամի ներքին վարկային գնահատման մոդելը, որը առանձին դասերի համար սահմանում է դեֆոլտի հավանականությունները,
- Հիմնադրամի գնահատման չափանիշները և որակական գնահատումը, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, և հետևաբար, ֆինանսական ակտիվների գծով պահուստները պետք է չափվեն ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային կորստի (ԱԿԱՎԿ) հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերի և ելակետային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և այնպիսի տնտեսական ելակետային տվյալների միջև, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքը, կապերի որոշումը և դրանց ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Կանխատեսվող մակրոտնտեսական սցենարների և դրանց հավանականությունների կշիռների ընտրությունը՝ ԱՎԿ մոդելների ելակետային տնտեսական փոփոխականները որոշելու համար:

(հազար ՀՀ դրամ)

4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեք

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Հիմնադրամը օգտագործում է զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ որպես զեղչման դրույք օգտագործելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարումը եկամտաբերության տոկոսադրույքը:

5. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
ՀՀ բանկերում ներդրված ավանդներ	21,693,491	18,512,248
ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ	9,459,497	262,853
Ընթացիկ հաշիվներ ռեզիդենտ բանկերում	1,730	–
Հետգնման համաձայնագրեր	–	755,814
Հանած՝ ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստ	(240,443)	(187,508)
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	**30,914,275**	**19,343,407**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները ներկայացված են ՀՀ դրամով և առավելագույնը մինչև 454 (2019թ.՝ 547) օր մարման ժամկետով:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման համաձայնագրեր չեն եղել (2019թ.՝ 755,814 հազ. դրամ): Ռեպո պայմանագրերի առարկա հանդիսացող պետական արժեթղթերի իրական արժեքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 759,851 հազ. դրամ:

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և Ռեպո գործարքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխության վերլուծությունը 2020թ. ընթացքում ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**19,530,915**	**19,530,915**
Նոր ակտիվներ	24,706,930	**24,706,930**
Մարված ակտիվներ	(13,083,127)	**(13,083,127)**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**31,154,718**	**31,154,718**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ-ի պահուստը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**187,508**	**187,508**
Նոր ակտիվներ	208,950	**208,950**
Մարված ակտիվներ	(125,606)	**(125,606)**
Մոդելների և ԱՎԿ-ի հաշվարկներում կիրառվող մուտքային տվյալների փոփոխություններ	(30,409)	**(30,409)**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**240,443**	**240,443**

(հազար ՀՀ դրամ)

5. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխության վերլուծությունը 2019թ. ընթացքում ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**10,036,468**	**10,036,468**
Նոր ակտիվներ	13,216,418	**13,216,418**
Մարված ակտիվներ	(3,721,971)	**(3,721,971)**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,530,915**	**19,530,915**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ-ի պահուստը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**121,800**	**121,800**
Նոր ակտիվներ	171,877	**171,877**
Մարված ակտիվներ	(45,169)	**(45,169)**
Մոդելների և ԱՎԿ-ի հաշվարկներում կիրառվող մուտքային տվյալների փոփոխություններ	(61,000)	**(61,000)**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**187,508**	**187,508**

6. Ներդրումներ պետական արժեթղթերում

2018թ. սկսած Հիմնադրամը ներդրումներ է իրականացնում ՀՀ կառավարության պետական արժեկտրոնային պարտատոմսերում: Ներդրումները պետական արժեթղթերում չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական արժեթղթերում ներդրումների իրական արժեքը կազմել է 3,392,773 հազ. դրամ (2019թ.՝ 3,602,686 դրամ), իսկ ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսը՝ 9,963 հազ. դրամ (2019թ.՝ պահուստի հակադարձումը՝ 7,378 հազ. դրամ):

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

ֆինանսական տարվա վերջում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից՝

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ(Ծան. 5)	9,459,497	–
Ընթացիկ հաշիվներ ռեզիդենտ բանկերում (Ծան. 5)	1,730	–
Հանած՝ ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստ	(1,157)	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**9,460,070**	**–**

8. Հատուցումների գծով ծախսեր և պարտավորություններ

Հատուցումների գծով ծախսերը բաղկացած են հատուցման գծով պարտավորությունների՝ սկզբնական ճանաչման պահին ճանաչված իրական արժեքից (2020թ.՝ 28,233,882 հազ. դրամ, 2019թ.՝ 2,662,349 հազ. դրամ) և դրանց՝ ամորտիզացված արժեքով վերաչափման արդյունքում առաջացող ֆինանսական բաղադրիչից (2020թ.՝ 775,810 հազ. դրամ, 2019թ.՝ 726,757 հազ. դրամ):

Հատուցումների գծով պարտավորության ամորտիզացված արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 27,004,507 հազ. դրամ (2019թ.՝ 6,024,740 հազ. դրամ):

(հազար ՀՀ դրամ)

9. Եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից

Պարտադիր վճարներից և նվիրաբերություններից ստացվող եկամուտները ներառում են.

	2020թ.	*2019թ.*
Պարտադիր վճարներ	9,134,278	8,469,950
Կամավոր նվիրաբերություններ	7,975,856	115,450
Ընդամենը եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	**17,110,134**	**8,585,400**

10. Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր

Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսը ըստ ֆինանսական գործիքների 2020թ. ընթացքում ներկայացված է ստորև.

	Ծան.	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	5	52,935	**52,935**
Ներդրումներ պետական արժեթղթերում	6	9,963	**9,963**
Ընդամենը ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր		**62,898**	**62,898**

Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսը ըստ ֆինանսական գործիքների 2019թ. ընթացքում ներկայացված է ստորև.

	Ծան.	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	5	65,708	**65,708**
Ներդրումներ պետական արժեթղթերում	6	(7,378)	**(7,378)**
Ընդամենը ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր		**58,330**	**58,330**

11. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ և գործառնական ռիսկեր

Հիմնադրամի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու կարգավորման հայեցակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը հիմնականում կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Հիմնադրամի կայունության ապահովման համար:

Դատական հայցերի գծով պայմանական պարտավորություններ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը իր բնականոն տնտեսական գործունեության ընթացքում չի ներգրավվել դատական գործընթացների մեջ: Ղեկավարության կարծիքով չկան ընթացիկ դատական գործընթացներ կամ այլ պահանջներ, որոնք կարող էին որևէ կերպ ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական դրության կամ գործարքների արդյունքների վրա, և որոնք չեն հաշվարկվել կամ բացահայտվել այս ֆինանսական հաշվետվություններում:

(հազար ՀՀ դրամ)

12. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև աղյուսակներում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ փոխհատուցման կամ մարման ժամկետների:

	Մինչև 1 տարի	*1 տարուց ավելի*	*Ընդամենը*
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ակտիվներ			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	26,192,860	4,721,415	**30,914,275**
Ներդրումներ պետական արժեթղթերում	50,198	3,342,575	**3,392,773**
Ընդամենը ակտիվներ	**26,243,058**	**8,063,990**	**34,307,048**
Պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	3,309,737	23,694,770	**27,004,507**
Ընդամենը պարտավորություններ	**3,309,737**	**23,694,770**	**27,004,507**
Զուտ դիրք	**22,933,321**	**(15,630,780)**	**7,302,541**

	Մինչև 1 տարի	*1 տարուց ավելի*	*Ընդամենը*
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ակտիվներ			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	13,647,367	5,696,040	**19,343,407**
Ներդրումներ պետական արժեթղթերում	357,984	3,244,702	**3,602,686**
Ընդամենը ակտիվներ	**14,005,351**	**8,940,742**	**22,946,093**
Պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	699,462	5,325,278	**6,024,740**
Ընդամենը պարտավորություններ	**699,462**	**5,325,278**	**6,024,740**
Զուտ դիրք	**13,305,889**	**3,615,464**	**16,921,353**

13. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցները, ներդրումները պետական արժեթղթերում և պարտավորությունները հատուցումների գծով:

Հիմնական ռիսկերը, կապված Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ, հանդիսանում են տոկոսադրույքի ռիսկը և իրացվելիության ռիսկը: Իրականացվում է վերահսկողություն ներքոհիշյալ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որոնք ամփոփված են ստորև:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Հիմնադրամի զուտ ակտիվների զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական ակտիվները 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Զուտ ակտիվների զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Զուտ ակտիվների զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

	2020թ.	
Արժույթ	*Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.*	*Ազդեցությունը զուտ ակտիվների վրա*
ՀՀ դրամ	+110	(181,162)
ՀՀ դրամ	-110	(28,751)

(հազար ՀՀ դրամ)

13. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ (շարունակություն)

	2019թ.	
Արժույթ	*Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.*	*Ազդեցությունը սեփական կապիտալի վրա*
ՀՀ դրամ	+100	(139,297)
ՀՀ դրամ	-100	43,218

Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է շարունակական վերահսկողություն վնասներ կրելու ռիսկի ուղղությամբ, որն առաջանում է իրացվելի ակտիվների բացակայության պատճառով ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելու անկարողությունից:

Մինչև մարման ժամկետը մնացած ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը

Ստորև ներկայացվում է 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվետու ամսաթվից մինչև չզեղչված պարտավորությունների պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն:

Ֆինանսական պարտավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*մինչև 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Պարտավորություններ հատուցումների գծով	1,269,785	2,166,986	11,509,977	40,728,243	**55,674,991**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,269,785**	**2,166,986**	**11,509,977**	**40,728,243**	**55,674,991**

Ֆինանսական պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*մինչև 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Պարտավորություններ հատուցումների գծով	179,906	554,796	3,639,652	9,150,481	**13,524,835**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**179,906**	**554,796**	**3,639,652**	**9,150,481**	**13,524,835**

Վարկային ռիսկ

Հիմնադրամի Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները պահվում են Հայաստանի բարձր համբավ ունեցող բանկերում: 2020թ. հունվարի 1-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգված են եղել Փուլ 1-ում՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

(հազար ՀՀ դրամ)

13. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում

Հիմնադրամը ակտիվների արժեզրկումը գնահատում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա: ԱՎԿ գնահատման մոդելի հիմնական տարրերը հետևյալն են.

PD — *Դեֆոլտի հավանականությունը* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

EAD — *Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:

LGD — *Դեֆոլտի դեպքում կորստի չափը* դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ (ECL) պահուստը հիմնված է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա (LTECL), եթե ի սկզբանե վարկային ռիսկի զգալի աճ տեղի չի ունեցել, որի դեպքում պահուստը հիմնված է 12 ամսվա համար ակնկալվող վարկային կորուստների վրա: ԱՎԿ-ն հաշվարկվում է անհատական կամ խմբային հիմունքներով՝ կախված հիմքում ընկած պորտֆելի կամ ֆինանսական գործիքների բնույթից:

Հիմնադրամը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Հիմնադրամը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

1-ին փուլ — Սկզբնական ճանաչման ժամանակ Հիմնադրամը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

2-րդ փուլ — Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Հիմնադրամը պահուստը ճանաչում է վարկի որոշողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (LTECL) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

3-րդ փուլ — Վարկային առումով արժեզրկված համարվող վարկերը: Հիմնադրանը պահուստը է հաշվառում գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (LTECL) համար:

POCI: — Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

(հազար ՀՀ դրամ)

14. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցների և հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են իրենց հաշվեկշռային արժեքներին:

Հիմնադրամն օգտագործում է հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատման մեթոդով որոշելու և բացահայտելու համար.

- 1-ին մակարդակ. Ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվների և պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գինը,
- 2-րդ մակարդակ. Մեթոդներ, որոնցում իրական արժեքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող բոլոր փոփոխականները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են,
- 3-րդ մակարդակ. Մեթոդներ, որոնցում իրական արժեքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող բոլոր փոփոխականները հիմնված չեն դիտարկելի շուկայական տեղեկատվության վրա:

Իրական արժեքով պարբերական գնահատմամբ ֆինանսական գործիքների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև.

	31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
	Մակարդակ 2	*Ընդամենը*	*Մակարդակ 2*	*Ընդամենը*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ				
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
Ներդրումներ պետական արժեթղթերում	3,392,773	3,392,773	3,602,686	3,602,686
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**3,392,773**	**3,392,773**	**3,602,686**	**3,602,686**

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2020թ. ներկայացված է ստորև.

	Իրական արժեք	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
Ներդրումներ պետական արժեթղթերում	3,392,773	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**3,392,773**		

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2019թ. ներկայացված է ստորև.

	Իրական արժեք	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
Ներդրումներ պետական արժեթղթերում	3,602,686	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**3,602,686**		

(հազար ՀՀ դրամ)

14. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

Ֆինանսական գործիքների իրական արժեքի հիերարխիան՝ գնահատված այն արժեքով, որը մոտարկում է դրանց իրական արժեքը 2020 և 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2020թ.			*31 դեկտեմբերի 2019թ.*		
	Մակարդակ 2	*Մակարդակ 3*	*Հաշվեկշռային արժեք*	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Հաշվեկշռային արժեք*
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է						
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցներ	29,964,152	–	30,914,275	17,573,022	–	19,343,407
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է						
Պարտավորություններ հատուցումների գծով	–	27,004,507	27,004,507	–	6,024,740	6,024,740

15. Կապակցված կողմերի բացահայտումներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցների

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ունի ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ 9,459,497 հազ. դրամի չափով (2019թ.՝ 262,853 հազ. դրամ):

Եկամուտ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից

2020թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Հիմնադրամը ստացել է տոկոսային եկամուտ ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներից 113,544 հազ. դրամի չափով (2019թ.՝ 16,236 հազ. դրամ):